

**ՍԵՆՅԱԿ**  
**(փորձարարական տեսանյութ)**

**Աննա Գրիգորյան**

**Երևանի Ժամանակակից արվեստի թանգարան**

**Օգոստոսի 6, 2021**

Արվեստագետ Աննա Գրիգորյանի «Սենյակ» խորագրով փորձարարական նախագծի խնդրո առարկան՝ կանանց նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունն ու կնասպանությունն է: Թեև տեսագրությունում արծարծված վիճագրական տվյալները և փաստերի շարադրումը ուղիղ կերպով հայաստանյան իրողությունների հետ է կապվում, այդուհանդերձ, հայտնի է, որ գենդերային հիմքով հետապնդումները, ստորադասման այլևայլ պրակտիկաներն, ընդհուպ մինչև ֆիզիկական հաշվեհարդարը, կանանց և աղջիկների սպանությունը, շարունակական բնույթ է կրում և տարածված է աշխարհով մեկ, ինչն էլ փաստում է այն մասին, որ խնդիրը լուծված չէ և կարոտ է անսպառ արծարծման և շարունակական պայքարի՝ դրա իսպառ վերացման ուղղությամբ:

Չնայած նրան, որ տեսանյութի առանցքում բռնության թեման է, հեղինակը հրաժարվում և բացառում է բռնությունը ներկայացնող պատկերների օգտագործումը: Կանանց սպանություններին վերաբերող քրեական գործերի մասին հաղորդումը զուգորդված է այնպիսի մարմնական ֆիզուրատիվությամբ, որը արվեստագետի կողմից բեմականացված է որպես այլաբանական տարածք, որտեղ գեղարվեստական արտահայտության միջոցով վերակենդանացվում, վերաակտուալացվում է գենդերի, մարմնական սահմանների և հայրիշխանական կարգի մասին դիսկուրսը:

2012 թվականին Հայաստանից Կանադա տեղափոխվելով՝ Աննա Գրիգորյանը ավարտել է Կոնկորդիայի համալսարանի արվեստի և լուսանկարչության բաժինը (2018): Արվեստագիտական իր պրակտիկայի ձևավորումն սկիզբը դրվել է Մոնրեալում, սակայն արվեստի նախագծերի մշակումը և իրագործումը Հայաստանում Աննա Գրիգորյանի առաջնային նպատակների ցանկում է: Արվեստագետի հղացական ջանքերն ուղղված են սոցիալ-տնտեսական, անհատական և հանրային բարեկեցության և մի շարք այլ քաղաքական հնչեղություն ունեցող խնդիրներին:

Նախագծի հանրային ներկայացումն «Արվեստի և մշակութային ուսումնասիրությունների լաբորատորիայի» ծրագրերի շրջանակում հնարավոր է դարձել Կանադայի արվեստների խորհրդի աջակցության շնորհիվ: